

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի. ԱՐՈՒԼԱԶԵԻ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ*

Հայ և վրաց ժողովուրդները, դարեր շարունակ ամենասերտ կապերի ու փոխհարաբերությունների մեջ լինելով իրար հետ, ինչպես նաև մյուս հարևան ժողովուրդների հետ, բազմաթիվ զուգադիպումներ ունեն իրենց լեզվի, ֆոլկլորի կամ գրականության մեջ, կենցաղում, ժողովրդական ավանդություններում և այլն:

Հայ և վրաց ժողովուրդների դիր ու գրականությունը, որ հանդես է եկել սոցիալ-տնտեսական միևնույն պայմաններում և պատմա-հասարակական միևնույն շարժառիթներով ու պահանջներով, դարերի պատմություն ունի: Երական սերտ շփումների հետևանքով, երկար դարերի ընթացքում, կատարվել են բազմաթիվ թարգմանություններ հայերենից վրացերեն կամ վրացերենից հայերեն: Դրանք երկու ժողովուրդների ինչպես վաղ, այնպես էլ ավելի ուշ շրջանների գրական հուշարձաններն են: Հետաքրքրական է, որ գրական հին շփումը, որպես միավորող ֆակտոր, զուգադիպում է հայ և վրաց մատենագրության սկզբնավորմանը: Այս իսկ տեսակետից հայ և վրաց ժողովուրդների գրական հուշարձանների համատեղ խորր ուսումնասիրությունը, այդ տեքստերի բազմակողմանի ու համեմատական վերլուծությունը և հետազոտությունը, նրանց կուլտուր-պատմական նշանակության պարզաբանումն ու բացահայտումը նոր լույս կսփռեն նաև հայոց և վրաց լեզուների անցյալ պատմությունը վեր հանելու և նրանց ներկա վիճակը բացահայտելու վրա:

Այս ուղղությամբ բավական աշխատանք է կատարվել ու կատարվում է Անդրկովկասյան տեսությունականներում:

Առանձնապես աչքի ընկնող աշխատանք է կատարում Վրացական ՍՍՌ-ի Ա թղթակից անդամ, պրոֆ. Իլիա Աբուլաձեն: 1944 թվականին, օրինակ, լույս տեսավ նրա «Վրաց և հայոց գրական կապերը 9—10-րդ դարերում» խորագրով մեծածավալ աշխատությունը՝ ընդարձակ ուսումնասիրությամբ և տեքստերով հանդերձ (ուր բերված են 13 գրական հուշարձան, որից 12-ը հայերենից է թարգմանված վրացերեն, իսկ մեկը՝ վրացերենից հայերեն):

Հայ-վրացական գրական կապերի վերհանման տեսակետից հետաքրքրություն ներկայացնող և ուշագրավ երևույթներից մեկն է նաև վերջերս (1953 թվականին) Ի. Վ. Ստալինի անվան ԽՍՀՄ-ի պետական համալսարանի հրատարակությամբ լույս տեսած, պրոֆ. Իլիա Աբուլաձեի «Քարթլիս ցխովրեբայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը» ծավալուն աշխատանքը:

Դեռևս 1939 թվականից պրոֆ. Աբուլաձեն ձեռնարկել է «Քարթլիս ցխովրեբայի» հին հայերեն թարգմանության ուսումնասիրության և նրա հրատա-

* Իլիա Աբուլաձե, Քարթլիս ցխովրեբայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը, ԽՍՀՄ, 1953:

րակության պատրաստման գործին: Հայերեն ձեռագրերի հետ ծանոթանալու և դրանք վրաց աղբյուրների հետ համեմատելու աշխատանքի արդյունքը եղավ այն, որ 1941 թվականին հայերեն լեզվով լույս տեսավ պրոֆ. Աբուլաձեի «Քարթլիս ցխովրեբայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը» վերտառությամբ հոդվածը¹:

Գրական այս հուշարձանի հին հայերեն թարգմանության (13-րդ դարի վերջերի) հնագույն ձեռագիրը, որը պրոֆ. Աբուլաձեն դրել է իր տվյալ հրատարակության հիմքում, ուշագրավ է այն տեսակետից, որ սա մոտ երկու դարով նախորդում է վրացերեն պահպանված «Քարթլիս ցխովրեբայի» (15-րդ դարի) հնագույն ձեռագրին: Հին հայերեն թարգմանության այս հնագույն ձեռագիրը, որպես Վրաստանի պատմության համար խոշոր նշանակություն ունեցող հիշյալ վրաց աղբյուրի («Քարթլիս ցխովրեբայի») հնագույն, այժմ գոյություն չունեցող ձեռագրերից մեկի թարգմանություն, անշուշտ, կնպաստի «Քարթլիս ցխովրեբա» բնագրի քննադատական հրատարակման գործին՝ տեքստի ճշտմաների և որոշ տեղերի վերծանման տեսակետից՝ մանավանդ որ այժմ Վրացական ՍՍՌ-ում պատրաստվում է բնագրի քննադատական հրատարակությունը):

Հին հայերեն թարգմանական գրականության այս հուշարձանի հրատարակությունը ուշագրավ է միաժամանակ նաև այն տեսակետից, որ սա հայ-վրացական գրական կապերի ու հարաբերությունների հին ու կարևոր փաստաթղթերից մեկն է: Այդ փաստաթղթի հայերեն թարգմանության հեղինակը, հայ թարգմանիչը Դավիթ Շինարարի ժամանակակիցն է, որ լավ է ճանաչում Վրաստանը, մասնավորապես Վրաստանի արևելյան հատվածը, և տալիս է տեղագրական և այլ կարգի ուշագրավ տեղեկություններ և այլն:

Այս ամենը հաշվի առնելով՝ պրոֆ. Իլիա Աբուլաձեն ձեռնարկել է տվյալ տեքստի ուսումնասիրությանն ու հրատարակությանը, որը թե՛ իր նպատակադրումով և թե՛ բնույթով միանգամայն տարբերվում է 1884 թվականին Վենետիկում լույս տեսած նույն տեքստի առաջին հրատարակությունից²:

«Քարթլիս ցխովրեբայի» հին հայերեն թարգմանությունը, որ կոչվում է «Պատմութիւն Վրաց» և հանդիսանում է բնագրի համառոտ թարգմանությունը, մինչև օրս հայտնի է ութ ձեռագրով: Այդ ձեռագրերից մեկը, որ ակադ. Մարի Բրոսեն թարգմանել է ֆրանսերեն և հրատարակել 1851 թվականին, պահպանված է Լենինգրադում, Արևելագիտության ինստիտուտում. երկրորդը պահպանված է Վենետիկի Մխիթարյանների մոտ, որը և հրատարակված է. երրորդը գտնվում է Փարիզի ազգային գրադարանում, իսկ մնացած հինգը՝ Հայկական ՍՍՌ ձեռագրատանը (Մատենադարանում):

Ներկա հրատարակության մեջ պրոֆ. Իլ. Աբուլաձեն տեքստերի բաժնում առաջին հերթին բերում է «Քարթլիս ցխովրեբայի» հին հայերեն թարգմանությունը, որի հիմքն է հանդիսացել «Քարթլիս ցխովրեբա» սկզբնաղբյուրի ամենահին ձեռագիրը, որն արտագրված է համարվում 1279—1311 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում:

Պրոֆ. Աբուլաձեն միաժամանակ տալիս է մյուս ձեռագրերի կարևոր տարբերությունները:

¹ Տես Հայկական ՍՍՌ Ժողովրդագիտության կից Պետական ձեռագրատան (Մատենադարանի) գիտական նյութերի ժողովածու, № 1, Երևան, 1941, էջ 31—40:

² «Համառոտ պատմութիւն վրաց, բնծայեալ Ջուանչերի պատմչի», Վենետիկ, 1884:

Հայերեն տեքստի կողքին պրոֆ. Աբուլաձեն բերում է այդ հին հայերեն թարգմանության իր ձեռքով կատարած նոր վրացերեն թարգմանությունը այն նկատառումով, որպեսզի հայերեն չիմացող վրաց ընթերցողը կարողանա ծանոթանալ հին հայերեն թարգմանության հետ և որոշակի գաղափար կազմել այդ մասին:

«Քարթլիս ցխովրեբայի» հին հայերեն տեքստին և նրա թարգմանությանը զուգընթաց պրոֆ. Աբուլաձեն բերում է նաև սկզբնաղբյուրը, այն է՝ «Քարթլիս ցխովրեբայի» համապատասխան բնագիրը, սկզբնաղբյուրից բաց թողնելով հին հայերեն թարգմանության մեջ համառոտված տեղերը:

«Պատմութիւն Վրաց» ընդհանուր վերնագրի տակ պրոֆ. Աբուլաձեն բերում է հետևյալ տեքստերը՝ 1. Լեոնտի Մրովելի, Կեանք թագաւորաց վրաց և հարց նախնեաց և ազգաց (էջ 5—136), 2. Ջուանշեր, Կեանք և քաղաքավարութիւն Վախթանգայ Դարգասալի (էջ 139—199), 3. Լեոնտի Մրովելի, Վկայաբանութիւն Արչի (էջ 203—208), 4. Մատեան Քարթլայ (էջ 211—232), 5. Կեանք արքայից արքայի Դաւթի (էջ 235—256) և հավելված՝ Մխիթար Այրիվանցի (Քարթլու իշխանների, թագավորների և եպիսկոպոսների անվանացանկը (էջ 259—261), Տեքստերին վերջից կցված է՝ ա) բառարան՝ 1. հայերեն-վրացերեն (էջ 265—300), 2. վրացերեն-հայերեն (էջ 300—322) և բ) հատուկ անունների ցանկեր՝ 1. հայերեն-վրացերեն (էջ 323—335) և 2. վրացերեն-հայերեն (էջ 335—343):

Գրքին նախորդում են՝ առաջաբանը (էջ 6—7) և բուն ուսումնասիրությունը՝ «Քարթլիս ցխովրեբայի հին հայերեն թարգմանությունը» ընդհանուր վերնագրի տակ (էջ՝ 01—032):

Այս ընդհանուր վերնագրի տակ հեղինակը, նախ և առաջ, տալիս է «Քարթլիս ցխովրեբայի» հին հայերեն թարգմանության ձեռագրերի, հրատարակությունների ու զրականության ակնարկը. 2) խոսում է սկզբնաղբյուրի հետ ունեցած «Քարթլիս ցխովրեբայի» հին հայերեն թարգմանության փոխհարաբերության, թարգմանչի ո՛վ լինելու և թարգմանության ժամանակի հարցերի շուրջը, 3) հատուկ տեղ է հատկացնում «Քարթլիս ցխովրեբայի» հին հայերեն թարգմանության յուրահատկություններին, ինչպես նաև՝ թարգմանության ու սկզբնաղբյուրի փոխհարաբերության հարցի քննությանը՝ տեքստերի խմբագրության տեսակետից. 4) տալիս է «Քարթլիս ցխովրեբայի» հին հայերեն թարգմանության և նրա սկզբնաղբյուրի մի քանի տեղերի մեկնաբանությունը և վերջում խոսում է տեքստերի շուրջը:

Աշխատանքը կատարված է գիտական բարեխղճությամբ ու խորությամբ և ներկայացնում է, անշուշտ, գիտական հետաքրքրություն ու արժեք:

Ա. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ